

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԿԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՔԱՂԱՔԱՅԻ ՌՈՒԲԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ «ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՆՏ ՕՐԵՆՔԻ 69 ՆՈՒՎԱԾԻ 8-ՐԴ ՄԱՍԻ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ՁԵՎԱԿԵՐՊՎԱԾ ԴՐՈՒՅԹԻ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԿԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ԴԻՄՈՂԻ՝ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ 16.03.2009թ. ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քննարկելով դիմողի միջնորդությունը սույն գործով դատական նիստին պատասխանող կողմի՝ օրենքով սահմանված ներկայացուցիչ ներգրավելու մասին, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 46 հոդվածը սահմանում է, որ «Կողմերը սահմանադրական դատարանում կարող են հանդես գալ անձամբ եւ (կամ) ներկայացուցիչների միջոցով»: Միաժամանակ նախատեսվում է, որ «Կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ կարող են հանդես գալ սահմանադրական դատարան դիմում ներկայացրած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը...»: Օրենքի ԿԵՄԿ ԿԵՄԿ ԿԵՄԿ հոդվածը նաեւ նախատեսում է, որ «Սահմանադրական դատարանում որպես կողմի ներկայացուցիչ կարող են հանդես գալ նրա լիազորած անձինք՝ պաշտոնատար անձը կամ այն փաստաբանը կամ բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող կամ սահմանադրական իրավունքի ոլորտում գիտական ասպիճան ունեցող անձը, որի լիազորությունները հավաստված են օրենքով սահմանված կարգով»: Ընդ որում, յուրաքանչյուր կողմ սահմանադրական դատարանում կարող է ունենալ ոչ ավելի, քան երեք ներկայացուցիչ:

Ներկայացրած, օրենքն Ազգային ժողովի նախագահին, ով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՆՏ օրենքի 18 հոդվածի 1-ին մասի դ) կետի համաձայն ներկայացնում է Ազգային ժողովը, իրավունք է վերապահում սահմանադրական դատարանում հանդես գալ անձամբ՝ որպես վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավար, ինչպես նաեւ 46 հոդվածի 3-րդ մասի պահանջները բավարարող ներկայացուցչի միջոցով, ինչը եւ արվել է ՆՏ Ազգային ժողովի նախագահի կողմից: ՆՏ Ազգային ժողովի նախագահը 03.03.2009թ. գրությամբ ՆՏ սահմանադրական դատարանին փոխանակել է, որ ԿԵՄԿ ԿԵՄԿ ԿԵՄԿ «...որպես պատասխանող կողմ

ներգրավված ՏՏ Ազգային ժողովի ներկայացուցիչ է նշանակված ՏՏ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանը»: ՏՏ սահմանադրական դատարանը պարզել է, որ Դ. Մելքոնյանը բավարարում է «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 46 հոդվածի 3-րդ մասում ներկայացված պահանջները եւ բազմիցս ՏՏ սահմանադրական դատարանում հանդես է եկել որպես լիազորված անձ:

Տիմք ընդունելով վերոշարադրյալը՝ միջնորդությունը մերժել:

2. Դիմողի՝ նիսպն արձանագրողի միջոցով ներկայացրած առաջարկությունների քննարկումը հետաձգել մինչև գործով որոշում ընդունելը:

**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՆ**

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

17 մարտի 2009 թվականի
ՍԴԱՈ-20